ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ Սյունիքի մարզի Տաթևի համայնքապետարանի կարիքների համար «ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/14» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Շինուհայր «30» «հուլիսի» 2021թ., ժամը 13:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գևորգ Ավետյան

Անդամներ՝ Անի Խաչատրյան

Լևոն Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հարություն Հարությունյան

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

«ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/14» ծածկագրով ***գնման ընթացակարգի հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին***

1. **Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

1.1 Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են ՀՀ Սյունիքի մարզ, Տաթև համայնք, գ. Շինուհայր, Մայրուղի 14 հասցեում, նիստերի սենյակում:

1.2. Ընդունել ի գիտություն, որ հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար
1.	«Ավա-Բիլդինգ» ՍՊԸ	ք. Գորիս, Կոմիտաս 5	avabuilding@mail.ru 094-209-215
2.	«Ձեռակերտ ՍՊԸ	ք. Գորիս, Սյունիքի 136/22	khikar.am65@mail.ru 093018698
3	«Գուրոս» ՍՊԸ	ք. Գորիս, Բակունցի 9	guros64@mail.ru 094-33-77-11

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի, «Ձեռակերտ ՍՊԸ-ի և «Գուրոս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարները կազմված են գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. Տվյալներ պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի, «Ձեռակերտ ՍՊԸ-ի և «Գուրոս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարներում հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը առկա են: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. Տվյալներ «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի, «Ձեռակերտ ՍՊԸ-ի և «Գուրոս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

4.1 «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի և «Գուրոս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 «Ձեռակերտ ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերից գնային առաջարկը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ այն է, որ «Ձեռակերտ ՍՊԸ-ի ներկայացված գնային առաջարկի ԱԱՀ-ն սխալ է հաշվարկվել՝ 3 883 846/երեք միլիոն ութ հարյուր ութսուներեք հազար ութ հարյուր քառասունվեց/ դրամի փոխարեն հաշվարկվել է 3883850 /երեք միլիոն ութ հարյուր ութսուներեք հազար ութ հարյուր հիսուն/, որի արդյունքում արժեքի և ԱԱՀ-ի հանրագումարը ստացվել է 23303080/քսաներեք միլիոն երեք հարյուր երեք հազար ութսուն/ դրամ՝ 23303076/քսաներեք միլիոն երեք հարյուր երեք հազար յոթանասունվեց/ դրամի փոխարեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

5. Մասնակիցների առաջարկած գները՝

Չափաբաժին 1. Շինուհայր բնակավայրի Կենտրոնական փողոց 23 հասցեի ՆՈՒՀ-ի շենքի մի հատվածի վերանորոգման աշխատանքներ

N	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային արժեքը Թվերով (տառերով)	Արժեք իքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	«Ավա-Բիլդինգ» ՍՊԸ	25144170 /քսանհինգ միլիոն մեկ հարյուր քառասունչորս հազար մեկ հարյուր յոթանասուն/	25083040 /քսանհիգ միլիոն ութսուներեք հազար քառասուն/	5016608 /հինգ միլիոն տասնվեց հազար վեց հարյուր ութ/	30099648 /երեսուն միլիոն իննսունինը հազար վեց հարյուր քառասունութ/
2	«Ձեռակերտ ՍՊԸ		19419230 /տասնինը միլիոն չորս հարյուր տասնինը հազար երկու հարյուր երեսուն/	3883850 /երեք միլիոն ութ հարյուր ութսուներեք հազար ութ հարյուր հիսուն/	23303080 /քսաներեք միլիոն երեք հարյուր երեք հազար ութսուն/
3	«Գուրոս» ՍՊԸ		16495400 /տասնվեց միլիոն չորս հարյուր իննսունհինգ հազար չորս հարյուր/	3299080 /մեկ միլիոն երեք հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր/	19794480 /տասնինը միլիոն յոթ հարյուր իննսունչորս հազար չորս հարյուր ութսուն/

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ Ո Ր Ո Շ Ե Ց՝

6. ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/14 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Ձեռակերտ» ՍՊԸ-ի հայտը հաշվի առնելով սույն արձանագրության 4.2 կետը և հիմք ընդունելով 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

7. ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/14 ծածկագրով գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ. պարբերությունը նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով, բավարար գնահատված «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ին և «Գուրոս» ՍՊԸ-ին հրավիրել բանակցությունների, գների նվազեցման շուրջ՝ էլեկտրոնային ձևով ծանուցում ուղարկելով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

8. ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/14 ծածկագրով գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգիե ՀՀ կառավարության 526-ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի գ., պարբերությունը ծանուցումը ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը սահմանել բանակցությունների անցկացման օր՝ ժամը 14:00-ին, 30 րոպե տևողությամբ, որը տեղի կունենա Սյունիքի մարզ, Տաթև համայնք, գ. Շինուհայր, Մայրուղի 14 հասցում, նիստերի դահլիժում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9. ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/14 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային ձևով պատշաճ ծանուցել մասնակցին սույն որոշման մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10. **ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-21/14** ծածկագրով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 05.08.2021թ.-ին ժամը 14:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

11. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ **Գ. Ավետյան**

Անդամներ՝ _____ **Ա. Խաչատրյան**

_____ **Լ. Հակոբյան**

Քարտուղար _____ **Հ. Հարությունյան**